

**ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

**14.09. 2007թ. N1 նիստի**

**1. Լսելով և քննարկելով** մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ **Մ.Աստվածատրյանի հաղորդումը** ամբիոնի խնդիրների և զարգացման հեռանկարների վերաբերյալ՝ գիտխորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. ԵրՊԼՀ մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի աշխատանքը գնահատել բավարար, արձանագրել դրական տեղաշարժ:
2. Արձանագրել, որ մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի և զարգացման ուղղությամբ մինչ օրս պատշաճ աշխատանք է տարվել հետևյալ ուղղություններով.
  - 2.1 Վերանայվել, ճշգրտվել և վերանշակվել են «Մանկավարժություն» և «Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա» դասընթացների բովանդակությունը և ուսումնական ծրագրերը, մշակվել է «Մանկավարժության» առարկայական նկարագիրը՝ կրեդիտային համակարգի պահանջներին համապատասխան:
  - 2.2 Դրական տեղաշարժ կա դիպլոմային և կուրսային աշխատանքների որակի բարձրացման ուղղությամբ.
  - 2.3 Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման բարելավման նպատակով ամբիոնը արդեն 2 տարի շրջանառության ուսանող-պրակտիկանտի թղթապանակը:
  - 2.4 Որոշակիորեն ակտիվացել է միջամբիոնական համագործակցությունը (լեզվական ամբիոնների ֆիզդաստիարակության և քաղպաշտպանության, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների ժողովրդավարության և եվրոպագիտության և հոգեբանության ամբիոնների հետ).
  - 2.5 Ուսանողների լսարանային բեռնվածության նվազեցման և ինքնուրույն ու գործնական աշխատանքներին հատկացվող ժամերի ավելացման նպատակով մշակվում են դասախոսությունների և գործնական առաջադրանքների էլեկտրոնային տարբերակները
  - 2.6 Գիտական գործունեություն է կատարվում պետբյուջեից ֆինանսավորվող գիտական թեմայի («Ժամանակակից լեզուների ուսուցումն ու ուսումնառությունը եվրոպական համատեքստում») շրջանակներում:
  - 2.7 Ամբիոնի անդամները հրատարակում են 8 գիրք, 2 մեթոդական ձեռնարկ, 63 հոդված նվիրված տարրական, միջին և ավագ դպրոցների ուսուցիչների վերապատրաստման տարբեր հիմնախնդիրներին, ժամանակակից տեղեկատվական և մանկավարժական տեխնոլոգիաների, ինչպես նաև ուսուցման ինտերակտիվ մեթոդներին, մասնակցում են միջազգային տարբեր գիտակրթական ծրագրերի (Եվրոպայի Խորհուրդ, ԺԼԵԿ, Այռեքս, «Փրոջեքթ հարմոնի», Համաշխարհային բանկ, «Քայլ առ քայլ»)
  - 2.8 Ամբիոնում շարունակում է ակտիվ գործել Եվրախորհրդի փաստաթղթային կենտրոնը, ամբիոնը հանդես է գալիս նաև որպես Հայաստանում ԺԼԵԿ-ի (Contact Point, ECML, Graz) պատասխանատու մարմին:

2.9 Ամբիոնի անդամների ակտիվ մասնակցությամբ թարգմանվել են լեզուների ուսուցման և ուսումնառության խնդիրներին առնչվող եվրոպական մի շարք փաստաթղթեր, ինչպես նաև ստեղծվել է եվրոպական լեզվական թղթապանակ՝ Հայաստանի տարրական դպրոցի աշակերտների համար, որը 2007թ. փետրվարին ստացել է եվրախորհրդի կրթության կոմիտեի և եվրոպական վավերացման հանձնաժողովի հավաստագիրը:

### **3. Դրա հետ մեկ տեղ կան լուրջ թերություններ**

- 3.1 Բավարար մակարդակով չի իրագործվում ուսանողների առաջադիմության ստուգումը, վերանայման կարիք են զգում գնահատման չափանիշները
- 3.2 Ուսուցման արդի պահանջներին չեն բավարարում սեմինար պարապմունքների անցկացումը, որով և չի ապահովվում այդ առարկաների գործնական ուղղվածությունը:
- 3.3 Ամբավարար է տեխնիկական միջոցների ներդրումը ուսումնական գործընթացում, չնայած, որ կարելի է արձանագրել որոշ տեղաշարժ.
- 3.4 Տեսական դասընթացների դեռևս ոչ բոլոր թեմաների համար են պատրաստվել մոդուլներ՝ կրեդիտային համակարգի պահանջներին համապատասխան:
- 3.5 Դեռևս չի մշակվել շարունակական մանկավարժական պրակտիկայի նոր հայեցակարգ:
- 3.6 Ցավոք, ամբիոնում եղած ասպիրանտներից և հայցորդներից շատ քիչ է պաշտպանողների թիվը:

### **Չանձնարարել**

4. Մինչև 2008թ.. մայիս ամիսը կրեդիտային համակարգի պահանջներին համապատասխան մշակել «Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա», «Մանկավարժություն» և մանկավարժական ցիկլի այլընտրանքային առարկաների նոր ծրագրեր, նկարագրեր, մոդուլներ /բակալավրի և մագիստրոսի աստիճանների համար/:

Ակտիվացնել մագիստրոսի աստիճանում մասնագիտության ներգրավման աշխատանքները:

5. Ավելի նպատակասլաց գործունեություն ծավալել մասնագիտական նոր կադրերի պատրաստման, վերապատրաստման և սերնդափոխության ուղղությամբ՝ նրանց ընդգրկելով վերապատրաստման դասընթացներում և մինչև 2008թ. սեպտեմբերը առնվազն 20%-ով երիտասարդացնել ամբիոնի կազմը՝ բարձրացնելով նաև ամբիոնի կադրերի գիտական մակարդակը:

6. Տարածել եվրոպական կրթական կառույցներում ձեռք բերած փորձը համալսարանական ստորաբաժանումներին, հանդիսանալ մանկավարժական նոր մտքի և ուսուցման նորագույն մեթոդների ներդրման ներբուհական կենտրոն:

7. Կրթական բարեփոխումների և կրեդիտային համակարգի շրջանակներում մինչև 2009թ. սեպտեմբեր մշակել ուսանողների գիտելիքների գնահատման համակարգ:

8. Մինչև 2008թ. սեպտեմբեր մշակել և դնել գործունեության մեջ ամբիոնի կրթության որակի գնահատման համակարգ:

9. Ակտիվացնել գործունեությունը ասպիրանտների և հայցորդների հետ՝ ավարտին հասցնելով նրանց աշխատանքները և ապահովել սահմանված ժամկետներում նրանց պաշտպանությունը:

10. Մշակել

- Մինչև 2008թ. փետրվար ամիսը մանկավարժական պրակտիկայի նոր թղթապանակ՝ հիմնվելով EPOSTL-ի սկզբունքների վրա.
- Մինչև 2008թ. մայիս ամիսը լեզվական ամբիոնների համագործակցությամբ ստեղծել եվրոպական լեզվական թղթապանակ բանասերների համար:

- Շարունակական մանկավարժական պրակտիկայի նոր հայեցակարգ և ծրագիր՝ բակալավրի /սկսած 2-րդ կուրսից. դաստիարակչական, ուսումնական, պասիվ, ակտիվ/ և ավելի խորացված մագիստրոսի աստիճանների համար:

**11. Նախաձեռնել միջազգային գիտաժողովներ**

12. Հարստացնել, կատարելագործել և պարբերաբար թարմացնել համալսարանի կայքում ամբիոնի էջը և պարբերաբար թարմացնել ԺԼԵԿ-ի հայերեն էջը:

13. Սույն որոշման մասին տեղեկացնել ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմին, կազմակերպել քննարկում որոշման կատարման ընթացքի և դրանից բխող խնդիրների վերաբերյալ, մինչև 2007թ. նոյեմբեր քննարկել այն շահագրգիռ ֆակուլտետների խորհուրդներում:

*Որոշման կատարումը դնել ամբիոնի և OLՖ, ՌOLՖ խորհրդների վրա, իսկ հսկողությունը գարգացման գծով պրոռեկտոր Մ. Ավագյանի վրա:*

\*\*\*\*

**2. Լսելով համալսարանի գիտքարտուղար Դ.Ղազարյանին**, որը գիտական խորհրդի քննարկմանը ներկայացրեց ռեկտորատի 24.08.07թ. հ.1 նիստի որոշումը ԵրՊԼՀ-ում ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթության կառավարման և պլանավորման» ամբիոն բացելու մասին հարցը և հիմք ընդունելով ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի և Երևանի Վ. Բյուսովի անվան պետական լեզնաբանական համալսարանի միջև կնքված համատեղ պայմանագիրը, կրթական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ ՀՀ ԿԳՆ միջազգային և միջպետական համաձայնագրերը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը՝ գիտական խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Հաստատել ռեկտորատի 24. 08. 07թ. հ.1 նիստի որոշումը՝

1. Ստեղծել «Կրթության կառավարման և պլանավորման» Յունեսկո-ի ամբիոն
2. Յունեսկո-ի Փարիզի կենտրոնակայանի կողմից հաստատված՝ Ներսես Գևորգյանին, ընդունել հաստիքային աշխատանքի և հանձնարարել ղեկավարել ամբիոնը
3. Հանձնարարել ուսումնական մասին ամբիոնի հետ միասին մշակել տարեկան գործողության պլանը:

Ամբիոնի գործունեության հիմնական նպատակներն են՝

1. Մագիստրոսական ուսումնական ծրագրերի մշակում
2. Գիտահետազոտական գործունեություն
3. Բարձր որակավորում ունեցող մանակավարժների պատրաստում
4. Միջազգային կապերի հաստատում
5. Տեղեկատվական գործունեություն

\*\*\*\*

**3. Լսեցին համալսարանի գիտքարտուղար Դ.Ղազարյանի հաղորդումը 23.05.2007թ.**

գիտխորհրդի հ.7 նիստի „Եվրախորհրդի կրթության նախարարների 2007թ. մայիսին կայացած համաժողովի,, որոշումների հանձնարարականների կատարողականի մասին՝

***Ամբիոնների կողմից կատարված հանձնարարականներ***

1. Մշակվել են առարկայական նկարագրերը, որտեղ արտացոլված են ECTS-ի և CEF-ի պահանջներից բխող գնահատման, ինքնագնահատման չափանիշները, գնահատման

սանդղակը, տրված են ուսումնասիրվող գրականության ցանկը ըստ առարկաների, ինչպես պարտադիր, այնպես էլ կամընտրական:

2. ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների և ժողովրդավարության ամբիոնը մանակավարժության ամբիոնի հետ համատեղ դասավանդվող մի շարք առարկաների ուսումնական ծրագրերում և դասընթացներում ընդգրկել են Եվրոպական ժողովրդավարական քաղաքացիության, միջմշակութային հաղորդակցության, լեզվական կրթական քաղաքականության ոլորտներին առնչվող հարցերին:
3. Հոգեբանության և հասարակական գիտությունների ամբիոնը ներդրել է «Միջմշակութային հաղորդակցության հոգեբանություն» և «Եթնիկական հոգեբանություն» առարկաները:
4. Մշակվել են Եվրախորհրդի հայեցակարգի /framework/ շրջանակներում լեզվի իմացության դեսկրիպտորները:
5. Անգլերեն 2-րդ մասնագիտություն ամբիոնը մշակել է լեզուների իրազեկության համաեվրոպական համակարգի ներքո բնութագրիչներ A1 – B2 սակարդակների համար ըստ ֆակուլտետների:

### ***Համագործակցությունը Եվրախորհրդի համապատասխան վարչությունների հետ***

1. Գրացի ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի հետ:

2. Եվրախորհրդի «Բարձրագույն կրթության և հետազոտությունների կոմիտեի հետ /Ներկայացուցիչ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ Ն. Գևորգյան/:

3. Եվրախորհրդի միջմշակութային և միջկրոնական երկխոսություն կրթության միջոցով /Ս/Չոլյան և Ն. Գևորգյան/:

4. Հայաստանը միացել է «Լեզվական կրթության քաղաքականության ուրվագծեր» ծրագրին, որի շրջանակում ԵՊԼՀ-ն (մանկավարժության և լեզուների դասավանդման ամբիոնի մասնակցությամբ) Եվրախորհրդի և ՀՀ ԿԳՆ-ի հետ համատեղ պատրաստում է «Լեզվաքաղաքականության և լեզվակրթության զարգացումը Հայաստանում» փաստաթուղթը:

5. Մանկավարժության և լեզուների դասավանդման ամբիոնը ակտիվ համագործակցում է Եվրախորհրդի փաստաթղթային կենտրոնի հետ:

6. Մանկավարժության և լեզուների դասավանդման ամբիոնի անդամների ակտիվ մասնակցությամբ ստեղծվել է Եվրոպական լեզվական թղթապանակ՝ Հայաստանի տարրական դպրոցի աշակերտների համար, որը 2007թ. փետրվարին ստացել էվրախորհրդի կրթության կոմիտեի և Եվրոպական վավերացման հանձնաժողովի հավաստագիրը:

7. Հոգեբանության ամբիոնը իրականացրել է նախապատրաստական աշխատանքներ Եվրախորհրդի լեզվաքաղաքականության բաժնի «Միջմշակութային շփումների ինքնակենսագրություն» ծրագրին մասնակցելու համար, որն ուղղված է դպրոցականների միջմշակութային ընկալումների յուրահատկությունների բացահայտմանը: Թարգմանվել են ծրագրային նյութերը, փաստաթղթերը և հարցաթերթիկները:

### ***Առաջարկություններ***

***Մանկավարժության և լեզուների դասավանդման ամբիոնը ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի հետ համատեղ նոր հատուկ դասընթացների մշակում և իրագործում***

1. Հասարակագիտական թեմաների ինտեգրումը օտար լեզուների ուսուցման գործընթացում Ուսանողների (օտար լեզուների ապագա ուսուցիչների) համար հատուկ դասընթացի և մոդուլների մշակում, որը երկու հիմնական նպատակ է հետապնդելու.

- առաջարկվող դասընթացների բովանդակային կողմի ուսուցում.
- տրված բովանդակային նյութը իր ապագա մանկավարժական գործունեության ընթացքում դպրոցական դասընթացին ինտեգրելու և դասավանդելու համապատասխան ինտերակտիվ մեթոդների ուսուցում.

*Դասընթացը կարող է ընդգրկել հետևյալ հասարակագիտական թեմաները:*

- Եվրոպայի Խորհուրդը երեկ և այսօր
- Մարդու իրավունքները և դրանց պաշտպանությունը. երեխայի իրավունքներ.
- Ժողովրդավարական, բազմալեզու և բազմամշակույթ հասարակության մարտահրավերները.
- Երիտասարդությունը՝ հասարակության բազմազանությանը դեմ հանդիման.
  - o քաղաքացիական, միջմշակութային, բազմալեզվական, հաղորդակցական իրազեկությունների ձևավորում
- Երիտասարդության դերը ժողովրդավարական, բազմալեզու, բազմամշակույթ և հանդուրժող հասարակություն կառուցելու գործում (համաեվրոպական դպրոցական և երիտասարդական ծրագրերին մասնակցություն):
- Գեղարվեստական գրականությունը՝ որպես միջմշակութային իրազեկության, կարողությունների ու հմտությունների զարգացման միջոց:

Որպես գործնական աշխատանք նախատեսվում է յուրաքանչյուր դասընթացի ավարտին տարբեր նախագծերի իրագործում (վեբ-որոնում):

## **2. Հոգեբանության ամբիոնի հետ համատեղ մշակել «Ներառական կրթություն» առարկայի ուսումնական ծրագիր:**

- 3. Մասնագիտական զարգացման և տեխնոլոգիաների ներդրման ռեսուրս-կենտրոնի ստեղծում,** որը կարող է իրականացնել կրթական, տեղեկատվական, խորհրդատվական, հետազոտական և փորձագիտական գործառույթներ

*Կենտրոնի բազան կարող են դառնալ*

- մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ռեսուրսները.
- Եվրախորհրդի և ԺԼԵԿ-ի (ECML) տեղեկատվական և փաստաթղթային ռեսուրսները.
- Այռեքսի ՏՂՈՒՎԾ ծրագրի շրջանակներում ստեղծված տեղեկատվական կենտրոն

## **ՈՐՈՇՈՒՄ Է**

### **1. Արձանագրել**

1.1 Որոշակի առաջընթաց առարկայական նկարագրերի ստեղծման, ECTS-ի և CEF-ի պահանջներից բխող գնահատման, ինքնագնահատման չափանիշների մշակման, ուսումնական ծրագրերում և դասընթացներում ժողովրդավարական քաղաքացիության, միջմշակութային հաղորդակցման, լեզվական կրթական քաղաքականության ոլորտներին առնչվող հարցերի ներդրման, Եվրախորհրդի հայեցակարգի /framework/ շրջանակներում լեզվի իմացության դեսկրիպտորների մշակման ուղղությամբ:

**2.** Բավարար գնահատելով Եվրախորհրդի համապատասխան վարչությունների հետ համագործակցությունը առաջարկել ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ Ն.Գևորգյանին ամիսը 1 անգամ հրավիրել կլոր սեղան ամբիոնների վարիչների, ուս.խորհրդի և համալսարանի այլ ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ՝ Եվրախորհրդի կոնֆերանսների նյութերի լուսաբանման և համալսարանում իրազեկությունը ավելի բարձրացնելու նպատակով:

### **3. Հանձնարարել**

3.1 ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների և ժողովրդավարության, հոգեբանության և հասարակական գիտությունների ամբիոններին և ուսանողական խորհրդին անդրադառնալ 23.05.2007թ. գիտխորհրդի հ.7 նիստի հանձնարարականների 3-րդ և 8-րդ կետերին և մինչև ս/թ հեկտեմբեր ամսվա վերջը ներկայացնել հանձնարարականների կատարման ժամկետները:

3.2 Ամբիոններին՝ ներդնել գնահատման մշակված չափանիշներն ըստ պատրաստվածության, բայց ոչ ուշ մինչև 2008-2009 ուս.տարվա սեպտեմբեր ամիսը:

3.3 Ամբիոններին՝ վերանայել ներկայացրած առաջարկությունները՝ նշելով պլանավորման ժամկետները և իրագործման մեխանիզմները:

3.4 Մանկավարժության և լեզուների դասավանդման ամբիոնին՝ մինչև ս/թ նոյեմբեր ամիսը մշակել ինկլյուզիվ /ներառական/ կրթության ծրագիրը, իսկ մինչև դեկտեմբեր ամիսը ներկայացնել Life- long Learning կրթության ծրագրի հայեցակարգային մոտեցումը:

3.5 Ուսումնական մասին՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթության կառավարման և պլանավորման» ամբիոնի հետ միասին մշակել Լոնդոնի հռչակագրից բխող գործողությունների ծրագիր:

4. Առաջարկել Պեստալոցցի ծրագրի համակարգող Ն.Գևորգյանին շարունակել տեղեկատվության տրամադրումը և աջակցությունը կրթության մասնագետների վերապատրաստման ուղղությամբ:

\*\*\*\*

## 16.10. 2007թ. N 2 նիստի

1. **Լսելով և քննարկելով երկրորդ օտար լեզվի ամբիոնի վարիչ Վ.Ստեփանյանի հաղորդումը** համալսարանում 2-րդ օտար լեզվի դասավանդման դրվածքի, ինչպես նաև բազմալեզու մասնագետներ պատրաստելու խնդիրների և զարգացման հեռանկարների վերաբերյալ՝ գիտխորհուրդը

### ՈՐՈՇՈՒՄ Է

1. Արձանագրել դրական տեղաշարժ 2-րդ օտար լեզվի դասավանդման և զարգացման գործընթացում.

- 1.1 Ընդլայնվել է համալսարանում դասավանդվող 2-րդ օտար լեզուների ցանկը / հունարեն, պարսկերեն/կորեերեն, չինարեն, հոլանդերեն, ռումիներեն, բուլղարարեն, լեհերեն, ուկրաիներեն /:
- 1.2 Ստեղծվել են մի շարք լեզվամշակութային կենտրոններ ԶԶ –ում հավատարմագրված համապատասխան դեսպանատների և հյուպատոսարանների համագործակցությամբ:
- 1.3 2007/2008 ուս. ծրագրերում նախատեսված է 3-րդ օտար լեզվի պարտադիր ուսուցում:
- 1.4 Գործընթացի մեջ են լեզուների իմացության համաեվրոպական համընդհանուր մակարդակների բնութագրիչների տեղայնացումն ու ներդրումը:
- 1.5 Կնքվել են համագործակցության պայմանագրեր արտերկրի մի շարք համալսարանների հետ՝ Զուլնաստան, Իտալիա, Իրան, Ռումինիա:

### *2. Դրա հետ մեկտեղ կան մի շարք բացթողումներ՝*

- 2.1 Զամակարգված չէ գիտելիքի ստուգումը և գնահատումը, բացակայում են լեզուների իմացության համաեվրոպական համընդհանուր մակարդակներին համապատասխան դասագրքերը և ձեռնարկները:
- 2.2 Բացակայում են միջազգային չափանիշներին համապատասխան նոր ծրագրերը:
- 2.3 Անբավարար է տեխնիկական միջոցների ներդրումը ուսումնական գործընթացում:
- 2.4 Զամակարգված չեն ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման թեստերը:
- 2.5 Բավարար չէ դասավանդվող նյութի մասնագիտական և մշակութաբանական ուղղվածությունը:
- 2.6 Բավարար մակարդակով չի իրականացվում միջամբիոնական համագործակցությունը :

Ելնելով վերոնշյալից, ինչպես նաև հիմք ընդունելով Եվրախորհրդի կողմից ընդունված լեզվական քաղաքականության առանցքային դրույթները և Զամալսարանի ռազմարական ծրագիրը՝ այն է կրթել և դաստիարակել բազմալեզու և բազմամշակույթ անհատ:

### *3. Զանձնարարել 2-րդ և 3-րդ օտար լեզու դասավանդող շահագրգիռ ամբիոններին՝*

- 3.1 Մեկ ամսյա ժամկետում ստեղծել աշխատանքային խմբեր հետևյալ ուղղություններով աշխատելու համար.
- 3.2 Մինչև 2007/2008 ուս. տարվա վերջը տեղայնացնել և ներդնել լեզուների իմացության համաեվրոպական համընդհանուր մակարդակները:
- 3.4 Մինչև 2008թ. փետրվար ամիսը ստեղծել լեզվի իմացության գնահատման և ինքնագնահատման ուղեցույց՝ ըստ մակարդակների:
- 3.5 Մինչև 2008թ. փետրվար ամիսը ներդնել առարկայական բնութագրիչները և մինչև 2007/2008 ուս. տարվա վերջը ստեղծել ուսումնական ձեռնարկներ՝ ըստ մակարդակների:
- 3.6 Դասավանդվող նյութում առավելագույնս ապահովել մասնագիտական ուղղվածությունը և մշակութաբանական ասպեկտը:
- 3.7 Մինչև 2007/08 ուս. տարվա դեկտեմբեր ամիսը բարձրագույն կրթական մասնագիտական չափորոշիչների /բակալավրիատ և մագիստրատուրա/ շրջանակներում մշակել 2-րդ և 3-րդ

լեզուների առարակայական ծրագրային չափորոշիչները եվրոպական բնութագրիչների համապատասխան:

- 3.8 Հիմք ընդունելով «Թարգմանությունը որպես մշակույթների փոխներթափանցման ձգողական դաշտ» ֆորումի շրջանակներում ընդունված որոշումները «Թագմանչական գործ» մասնագիտության խնդիրների վերաբերյալ, առանձնահատուկ ուշադրություն դարձնել 2-րդ օտար լեզվի դասավանդմանը թարգմանչական բաժնում:
- 3.9 Մինչև 2008թ. մայիս ամիսը ստեղծել միասնական թեստեր բակալավրի ելքային գիտելիքների ստուգման համար՝ որպես շեմ ընդունելով B2- C1 մակարդակը, իսկ մագիստրի համար՝ C1- C2 մակարդակը:
- 3.10 Մինչև 2008/2009 ուս. տարվա սկիզբը առարակայական ծրագրերից դուրս լեզուներ ուսումնասիրել ցանկացողների համար պայմանագրային հիմունքներով նախատեսել դասընթացներ համալսարանի համապատասխան ամբիոններում:
- 3.11 Մինչև 2008թ. փետրվար ամիսը մշակել ամբիոնային ծրագրերի մոնիթորինգի համակարգված ձևեր՝ նպատակաուղղված դասավանդման գործընթացի որակի ապահովմանը :
- 3.12 Ապահովել ինֆորմացիոն /ռեսուրսային/ դաշտը:

#### **4. Ելնելով վերոնշյալից**

- 4.1 Մինչև 2008թ. մայիս ամիսը մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հետ միասին մշակել ուսանողի լեզվական թղթապանակ բանասերների համար՝ օգտագործելով եղած փորձը/ ի կատարումն գիտխորհուրդ հ.1 14.09.2007թ./:
- 4.2 Հանձնարարել մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնին կազմակերպել սեմինարներ 2-րդ և 3-րդ օտար լեզու դասավանդող դասախոսների համար իննովատիվ մեթոդների կիրառման ուղղությամբ:
- 4.3 Մշակութաբանական և երկրագիտական ասպեկտն ապահովելու համար մշտապես համագործակցել ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդու իրավունքների և ժողովրդավարության և եվրոպագիտության, Գրականագիտության, հորգեբանության և հասարակական գիտությունների ամբիոնների հետ:
- 4.4 Հանձնարարել համակարգչային կենտրոնին և ՈՒՏՍ բաժնին ապահովել ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառումը դասագործընթացում:
- 4.5 Հանձնարարել դեկանների՝ ուսումնասիրել 4-րդ լեզվի կամընտրական ներդրման հնարավորությունները:
- 4.6 Ընդլայնել կապերը ՀՀ-ում հավատարմագրված համապատասխան դեսպանատների, միջազգային կազմակերպությունների և կրթական հաստատությունների հետ և հանձնարարել 2-րդ օտար լեզվի, ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոններին՝ շարունակել ընդլայնել 2-րդ և 3-րդ օտար լեզուների ցանկը՝ արդեն եղած, լեզուների ցանկում ընդգրկելով ԱՊՀ երկրների և ՀՀ փոքրամասնությունների լեզուները:

*Որոշման կատարումը դնել ամբիոնների, իսկ հսկողությունը ԵրՊԼՀ-ի զարգացման գծով պրոռեկտոր Մ.Ավագյանի և ուսումնական մասի վրա:*

\*\*\*\*

**2. Լսելով և քննարկելով զարգացման գծով պրոռեկտոր Մ.Ավագյանի հաղորդումը բարձրագույն մասնագիտական կրթության որակի ապահովման, հավաստման և կառավարման կարգի վերաբերյալ՝ գիտխորհուրդը**

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Ընդունել որպես հիմք ներկայացված կարգը և հետագա քննարկման համար սպասել առաջարկությունների: